
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ _____	1
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ _____	4
ԳՅՈՒՏԵՐ _____	6
ՀԱՅՏԵՐ _____	6
ԱՐՏՈՆԱԳՐԵՐ _____	11
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻՉԱՅՆՆԵՐ _____	13
ՀԱՅՏԵՐ _____	13
ԱՐՏՈՆԱԳՐԵՐ _____	15
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ _____	16
ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	20
ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ _____	20
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ _____	21
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ _____	22
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ _____	22
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ _____	23
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ _____	25
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ _____	27

Հրատարակվում է Մտավոր սեփականության գրասենյակի կողմից

Խմբագրական կոլեգիա՝

Քրիստինե Համբարյան

Լիլյա Հակոբյան

Արփիինե Եզանյան

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5/1

Հեռ. 011 597 534 հայտերի քննունման բաժին

*Հեռ. 011 597 535 տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և
հրատարակումների բաժին*

Internet: www.aipo.am

E-mail: armpat@aipa.am

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության համակարգը, այդ համակարգի շարունակական զարգացումը հանդիսանում է գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման կարևորագույն կոմպոնենտներից մեկը:

Գիտելիքահենք և նորարար տնտեսությունում մեծապես կարևորվում են ստեղծարար ոլորտները (ճարտարապետությունը, արհեստագործությունը, երաժշտությունը, գեղանկարչությունը, ինչպես նաև գիտությունը, տեխնոլոգիաները, ճարտարագիտությունը և այլն), որոնց հիմքում ընկած է ստեղծարար մարդու մտավոր գործունեությունը, և այդ գործունեության հետևանքով ստեղծված արդյունքները, որոնք հանդիսանում են մտավոր սեփականության արգասիք: Իսկ մարդու ստեղծարար և մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացումը նպաստում է գիտելիքահենք տնտեսության զարգացմանը և առաջխաղացմանը:

Մտավոր սեփականության իրավունքների նկատմամբ գիտելիքների և իրազեկվածության բացակայությունը կարող է ոտնահարել ստեղծարար գործունեությամբ զբաղվող անձանց իրավունքները, ինչն էլ իր հերթին պարունակում է մի շարք խոչընդոտներ գիտելիքահենք տնտեսության զարգացման համար:

Մտավոր սեփականության ոլորտում գիտելիքների և իրազեկման բարձրացման նպատակով՝ Մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ) 2024 թվականին կազմակերպել է պետություն-մասնավոր երկխոսության միջոցառումներ՝ պարբերաբար հանդիպելով մասնավոր սեկտորի ներկայացուցիչների հետ:

Փաստաթղթերի ամբողջական թվայնացման, էլեկտրոնային և տեղեկատվական համակարգերի բարելավման և արդիականացման, շահառուներին դրանք ավելի հասանելի դարձնելու նպատակով Գրասենյակը

համագործակցել է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ:

Գրասենյակը ձեռք է բերել էլեկտրոնային թվային ստորագրության գործիքակազմ, ինչը թույլ է տալիս ստորագրել համակարգի կողմից գեներացվող փաստաթղթերը համակարգի ներսում՝ ինքնաշխատ եղանակով:

Արդյունքում՝ հաշվետու ժամանակաշրջանում մոտ 50%-ով ավելացել է էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտերի և դիմումների քանակը:

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա համեմատությամբ աճել է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների գրանցման հայտերի (մոտ 10%-ով), ինչպես նաև Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշամաք ստացված ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին ծանուցումների քանակը (մոտ 63%-ով):

Մշտապես կարևորելով մտավոր սեփականության ոլորտ որակավորված մասնագետների ներգրավումը և մասնագիտական գիտելիքների խորացումը՝ Գրասենյակը 2024 թվականին 2 անգամ անցկացրել է արտոնագրային հավատարմատարների որակավորման քննություններ: Արտոնագրային հավատարմատարների որակավորման քննություններին մասնակցելու համար դիմում ներկայացրած 26 թեկնածուներից քննությունների արդյունքում հաղթող են ճանաչվել 3-ը:

2024թ.-ին բարեփոխվել է նաև օրենսդրական դաշտը, ինչը միտված է գործարար միջավայրի բարելավմանը: Օրենսդրության բարեփոխման արդյունքում հեշտացվել են արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման ընթացակարգերը, և իրավատերերին տրվել են իրենց իրավունքների պաշտպանության ավելի լայն շրջանակ:

2024թ.-ին շրջանառության մեջ է դրվել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» նոր օրենքի նախագիծը և «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Օրենսգրքի 1137-րդ հոդվածով հեղինակային իրավունքի իրավատիրոջը հնարավորություն է տրվում ստանալ փոխհատուցում հեղինակային իրավունքի օբյեկտի անօրինական օգտագործման համար՝ անկախ կրած վնասի չափից:

Վավերացվել և ուժի մեջ է մտել «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը փոփոխող արձանագրությունը»:

2024 թվականի ընթացքում Գրասենյակը խորացրել է միջազգային համագործակցությունը՝ ակտիվորեն մասնակցելով մտավոր սեփականության ոլորտի տարբեր միջոցառումների՝ հեռավար և առկա ձևաչափերով:

Մտավոր սեփականության գրասենյակի և ՄՍՀԿ ակադեմիայի միջև համագործակցության արդյունքում 2025 թվականի հունիսին ՀՀ-ում կբացվի առաջին ՄՍ ուսումնական կենտրոնը, որը կտրամադրի մասնագիտացված ուսուցում մտավոր սեփականության ոլորտի թիրախային խմբերի համար:

2024թ.-ի նոյեմբերին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Գրասենյակի և «Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի» հետ համատեղ մեկնարկեց «Մտավոր սեփականությունը՝ որպես հայկական գինեգործության կայուն զարգացման շարժիչ ուժ» ծրագիրը: Ծրագրով նախատեսված միջոցառումները կիրականացվեն 2025 թվականի 9 ամիսների ընթացքում: Այն կնպաստի գինեգործների, արտադրողների գիտելիքների, հմտությունների և մտավոր սեփականության գործիքների արդյունավետ կիրառմանը, արտադրանքի արժեքի ավելացմանը և մրցունակության բարձրացմանը համաշխարհային շուկայում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գրասենյակը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող գրասենյակ է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գրասենյակը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, արդյունաբերական դիզայնների, ապրանքային և սպասարկման նշանների, աշխարհագրական նշումների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքների փոխանցման և օգտագործման իրավունքի ընձեռման՝ ֆրանչայզինգի, լիցենզային պայմանագրերի, այդ թվում՝ բաց լիցենզիաների գրանցումը:

Գրասենյակն իրականացնում է արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի փորձաքննության որոշումներին վերաբերող և արտոնագիր կամ վկայագիր տալու դեմ առարկությունների ու բողոքների քննարկումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գրասենյակը նախապատրաստում և հրապարակում է իր պաշտոնական կայքէջում:


Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ Գրասենյակը համագործակցում է նմանատիպ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ և կատարում է միջազգային պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Քրիստինե Համբարյան
Գրասենյակի ղեկավար




Գյուտերի և արդյունաբերական
դիզայնների փորձաքննության բաժին
Ավետիս Պերյան




Ապրանքային նշանների և աշխարհագրական
նշումների փորձաքննության բաժին
Աննա Հայրապետյան




Հեղինակային իրավունքի և
հարակից իրավունքների բաժին
Արա Սմբատյան



Տեղեկատվական տեխնոլոգիաների
ապահովման և հրապարակումների բաժին
Արփինե Եզանյան



Հայտերի ընդունման բաժին
Լիլյա Հակոբյան



Պետական գրանցամատյանների բաժին
Արմենուհի Շահինյան

ԳՅՈՒՏԵՐ


ԳՅՈՒՏԵՐ

ՀԱՅՏԵՐ

2024 թվականին Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 96 հայտ՝ 19 գյուտի արտոնագիր ստանալու հայտ (հայտերի ընդհանուր քանակի 19,79%-ը) և 77 գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտ (հայտերի ընդհանուր քանակի 80,21%-ը): Ներկայացված գյուտի արտոնագիր ստանալու հայտերից 13-ը ստացվել են ազգային հայտատուներից, իսկ 6-ը օտարերկրյա հայտատուներից, այդ թվում՝ 5-ը PCT համակարգով ազգային փուլ փոխադրված հայտով: Գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտերից 75-ը ստացվել են ազգային հայտատուներից, իսկ 2-ը՝ օտարերկրյա հայտատուներից:

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 34 հայտ (հայտերի ընդհանուր քանակի 35,42%-ը):

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԳՅՈՒՏԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	61	63,54%
Իրավաբանական անձ, այդ թվում՝	35	36,46%
Առևտրային կազմակերպություն	18	18,75%
ԲՈՒՀ կամ Գիտական հաստատություն	17	17,71%
Ընդամենը	96	100%

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով հրապարակվել է գյուտի արտոնագիր ստանալու 4 հայտ (2023թ.-ին՝ 9 հայտ):

2024թ.-ի ընթացքում Գրասենյակ ներկայացվել է ըստ էության փորձաքննության անցկացման 2 դիմում (2023թ.-ին՝ 7 դիմում):

2024 թվականին Գրասենյակը ստացել է 5 եվրասիական հայտ և սահմանված ժամկետում առաքել է այն Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:


Այսպիսով, 1997-2024 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 74 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 101 հայտով, ընդ որում՝ 4 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր տալու մասին, 76 հայտով կայացվել են որոշումներ գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու մասին, 15 հայտով կայացվել են որոշումներ հայտը հետ կանչված համարելու մասին, 2 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր տալը մերժելու մասին և 4 հայտով կայացվել են որոշումներ գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալը մերժելու մասին:


ԳՅՈՒՏԵՐ

Բացի այդ, 10 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր ստանալու հայտի հրապարակման մասին:

ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐԿԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



ԳՅՈՒՏԵՐ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1.	Մանրամթերք և ծխախոտ (A21-A24)	11	11,46%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	10	10,42%
3-4.	Ուսուցման միջոցներ (G09-G12)	8	8,33%
3-4.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	8	8,33%
5-7.	Զափում և օպտիկա (G01-G03)	6	6,25%
5-7.	Տրանսպորտ (B60-B68)	6	6,25%
5-7.	Ճշգրիտ մեխանիկա, համակարգչային տեխնիկա, ազդանշանում (G04-G08)	6	6,25%
8-10	Շինարարություն (E01-E06)	5	5,21%
8-10.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	5	5,21%
8-10.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	5	5,21%
11-21.	Այլ բնագավառներ	26	27,08%
	Ընդամենը	96	100%

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2022	2023	2024	Ընդհանուր թիվը (2022- 2024)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1-2.	Մանրամթերք և ծխախոտ (A21-A24)	8	23	11	42	12,88%
1-2.	Բժշկություն և անասնաբուժություն	20	12	10	42	12,88%


ԳՅՈՒՏԵՐ

	(A61-A63, բացառությամբ A61K)					
3.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	20	11	0	31	9,51%
4.	Ճշգրիտ մեխանիկա, համակարգչային տեխնիկա, ազդանշանում (G04- G08)	12	3	6	21	6,44%
5.	Չափում և օպտիկա (G01-G03)	6	7	6	19	5,83%
6-7.	Տրանսպորտ (B60-B68)	5	6	6	17	5,21%
6-7.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	9	3	5	17	5,21%
8.	Շինարարություն (E01- E06)	1	10	5	16	4,91%
9.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	3	4	8	15	4,60%
10.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	4	6	3	13	3,99%
11-12.	Ուսուցման միջոցներ (G09-G12)	0	3	8	11	3,37%
11-12.	Օրգանական քիմիա (C07, A01N)	6	1	4	11	3,37%
13.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	3	3	4	10	3,07%
14-15.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21- B30, B32)	2	2	5	9	2,76%
14-15.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	3	3	3	9	2,76%
16	Այլ բնագավառներ	16	15	12	43	13,19%
	Ընդամենը	118	112	96	326	100%

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2024 թվականին տրվել է՝ 7 գյուտի արտոնագիր և 70 գյուտի կարճաժամկետ արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է 5 գյուտի արտոնագիր (Ռուսաստանի Դաշնություն, Շվեյցարիա, Գերմանիա և Իսպանիա) և 4 գյուտի կարճաժամկետ արտոնագիր (Ռուսաստանի Դաշնություն և Չեխիա):


ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



2024 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 4994 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 230-ը, որոնցից 206-ը գյուտի կարճաժամկետ արտոնագրեր են:

ԳՅՈՒՏԵՐ

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (2022-2024)



2024 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 8561 Եվրասիական արտոնագրեր:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ՀԱՅՏԵՐ

2024 թվականին ազգային ընթացակարգով Գրասենյակ ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 26 հայտ (2023 թվականին՝ 37 հայտ): Բոլոր 26 հայտերն ստացվել են ազգային հայտատուներից (2023 թվականին՝ 35 հայտ):


Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 14 հայտ (2023 թվականին՝ 16 հայտ), ինչը կազմել է հայտերի ընդհանուր թվի 53,85%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով հրապարակվել է արդյունաբերական դիզայնի 30 հայտ (2023 թվականին՝ 29 հայտ):

Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշամաք ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 120 ծանուցում (264 արդյունաբերական դիզայնով) (2023 թվականին՝ 138 ծանուցում, 262 արդյունաբերական դիզայնով): Գրանցումները ներկայացվել են 21 երկրից (Շվեյցարիա՝ 72, Ռուսաստանի Դաշնություն՝ 12, Կորեայի Հանրապետություն՝ 6 և այլն):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԱՐՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏՆՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	17	65,38%
Իրավաբանական անձ	9	34,62%
Ընդամենը	26	100%

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳՈՎ ՍՏՆՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԱԴՄԴ (ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ) ԴԱՍԵՐԻ ԲԵՐՎԱԾ ԵՆ ԱՐՅՈՒՍԱԿՈՒՄ

No	ԱԴՄԴ դասը	Ներկայացված հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Ապրանքների տեղափոխման կամ պահպանման համար օգտագործվող փաթեթվածք, տարա և բեռնարկղեր (դաս 9)	9	34,62%
2.	Սննդամթերք (դաս 1)	5	19,23%
3.	Այլ դասերի մեջ չներառված կենցաղային իրեր (դաս 7)	3	11,54%
4-5.	Խաղեր, խաղալիքներ, վրաններ, վրածածկեր և մարզական ապրանքներ (դաս 21)	2	7,69%

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻՉԱՅՆՆԵՐ

4-5.	Շինարարական բլոկներ, շինարարական կառուցվածքներ և դրանց տարրերը (դաս 25)	2	7,69%
6-10.	Այլ դասեր	5	19,23%
	Ընդամենը	26	100%

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2024 թվականի ընթացքում տրվել է 27 արդյունաբերական դիզայնի արտոնագիր (74 տարբերակով) (2023 թվականին՝ 31 արտոնագիր), որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է 1 արդյունաբերական դիզայնի արտոնագիր (Միացյալ Թագավորություն):

2024 թվականի ընթացքում արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման 121 (245 արդյունաբերական դիզայնով) ծանուցումների վերաբերյալ կայացվել է դրական որոշում (2023թ.-ին՝ 125 դրական որոշում՝ 265 արդյունաբերական դիզայնով):

2024 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 651 արդյունաբերական դիզայնի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է 246 արտոնագիր:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

2024 թվականին ավելացել է Մտավոր սեփականության գրասենյակ ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 3636 հայտ, ինչը մոտ 10 %-ով ավել է նախորդ տարվա համեմատ: Հայտերից 2965-ը ստացվել է ազգային հայտատուներից: Ապրանքային նշանների թվով 3615 հայտով կատարվել է փորձաքննություն, գրանցվել են 1434 ապրանքային նշաններ: 2024 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 2499 ապրանքային նշանների վկայագրեր:

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2981 ծանուցում:


Միջազգային ծանուցումներով կայացվել է 2033 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

2024 թվականին նախորդ տարվա համեմատ 63%-ով ավել է Հայաստանի Հանրապետությունից միջազգային գրանցման ներկայացված հայտերի քանակը՝ 62 հայտ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը՝ 3636 հայտից 1848 հայտ ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որը կազմում է ներկայացված հայտերի քանակի 50.8 %-ը:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ



2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	2965		2965
AE	Արաբական Միացյալ Ամիր.	83	30	113
CH	Շվեյցարական Համադաշնություն	41	196	237
CN	Չինաստան	80	423	503
CY	Կիպրոս	11	51	62
DE	Գերմանիա	8	147	155
ES	Իսպանիա	19	54	73
FR	Ֆրանսիա	13	114	127
GB	Միացյալ Թագավորություն	13	67	80


ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

GE	Վրաստան	8	12	20
HU	Հունգարիա	35	185	220
IN	Հնդկաստան	9	31	40
IT	Իտալիա	8	143	151
JP	Ճապոնիա	26	43	69
KR	Կորեայի Հանրապետություն	38	62	100
RU	Ռուսաստանի Դաշնություն	70	567	637
VG	Վիրջինյան կղզիներ	8	1	9
USA	ԱՄՆ	123	143	266
Others (QA, KZ, UK, NL, FI, IE, PL, TR, HK, IR, IL, KY, MX, UZ, TW, MU, IQ, LV, JO, BR, AT, LK, BB, MY, VC, IM, SK, KW, SG, MK, EE, AU)		78	712	790
Ընդամենը		3636	2981	6617

2024 թվականին ըստ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի (ԱՇՄԴ) դասերի հայտարկված ապրանքային նշանների և ծառայությունների քառյակն ունի հետևյալ տեսքը:

- 1058 հայտով առաջատար դիրքում են ԱՇՄԴ 35-րդ դասի (գովազդ-գործարարության կառավարում, կազմակերպում, վարչարարություն. գրասենյակային ծառայություններ) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.

- 600 հայտով երկրորդ տեղում են ԱԾՄԴ-ի 43-րդ դասի (սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.
- 500 հայտով երրորդ տեղում են ԱԾՄԴ-ի 30-րդ դասի (սուրճ, թեյ, կակաո և դրանց փոխարինիչներ. բրինձ, մակարոնեղեն և լապշա (արիշտա). տապիոկա և սագո. ալյուր և հացահատիկային մթերքներ. հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք. շոկոլադ. պաղպաղակ, շարբաթ և այլ սննդային սառույցներ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, համեմանք, ամոքանք, պահածոյացված խոտաբույսեր. քացախ, սոուսներ և այլ համեմունքներ. սառույց (սառեցված ջուր)) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.
- 482 հայտով չորրորդ տեղում են ԱԾՄԴ-ի 41-րդ դասի (կրթություն. ուսումնական գործընթացի ապահովում. զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները:



ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանների գրանցման դեմ 250 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը մոտ 74%-ով ավել է նախորդ տարվա համեմատ:

ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ

2024 թվականի ընթացքում գրանցվել է 2501 ապրանքային նշան, որոնց տրվել են ապրանքային նշանի վկայագրեր: 2024 թվականի ընթացքում երկարաձգվել է 1025 ապրանքային նշանների գործողության ժամկետները:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 850 փոփոխություն և այլ գործողություններ:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են հետևյալ պայմանագրերը՝

1. Ապրանքային նշանի իրավունքների փոխանցում՝	149
2. Ապրանքային նշանի լիցենզիա՝	34
3. Ապրանքային նշանի լիցենզիայի փոփոխություն՝	5
4. Ապրանքային նշանի լիցենզիան չեղյալ հայտարարելու մասին՝	2
5. Ապրանքային նշանի ենթալիցենզիա՝	22
6. Ապրանքային նշանի ենթալիցենզիայի փոփոխություն՝	1
7. Ապրանքային նշանի ենթալիցենզիայի չեղյալ հայտարարում՝	1
8. Ապրանքային նշանի ֆրանչայզինգ՝	1
9. Ապրանքային նշանի ֆրանչայզինգի փոփոխություն՝	2
10. Ապրանքային նշանի ֆրանչայզինգի չեղյալ հայտարարում՝	1
11. Ապրանքային նշանի ենթաֆրանչայզինգ՝	5
12. Ապրանքային նշանի ենթաֆրանչայզինգի փոփոխություն՝	19
13. Արդյունաբերական դիզայնի իրավունքների փոխանցում՝	1
14. Արդյունաբերական դիզայնի ֆրանչայզինգ՝	1
15. Արտոնագրի ոչ բացառիկ լիցենզիա՝	1
16. Արտոնագրի բացառիկ լիցենզիա՝	1
Ընդամենը՝	246

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2024 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Գրասենյակի բողոքարկման խորհուրդը ներկայացվել է 24 ապրանքային նշանների վերաբերյալ բողոքներ և 6 ապրանքային նշաններ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումներ: Ներկայացված բողոքներից և դիմումներից 9-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 21-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2024թ.-ի ընթացքում Մտավոր սեփականության գրասենյակը 140 դատական գործերով մասնակցել է 200 դատական նիստերի:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2024 թվականին օրենսդրության կատարելագործման համար Մտավոր սեփականության գրասենյակի կողմից իրականացվել են բարեփոխումներ նաև իրավական դաշտում, որոնք միտված են գործարար միջավայրի բարելավմանը:

Շրջանառության մեջ է դրվել և արդեն Կառավարությանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է փոփոխել Քաղաքացիական օրենսգրքի 1137-րդ հոդվածը:

Նախագծով առաջարկվում է նախատեսել իրավատիրոջ կողմից օրենքով նախատեսված սահմանված չափով հեղինակային իրավունքի օբյեկտի անօրինական օգտագործման համար փոխհատուցում ստանալու հնարավորություն, որի դեպքում իրավատերը դատարանում որպես հայցվոր հանդես գալիս պարտավոր չի լինի ապացուցել, որ ինքը կրել է որևէ չափի ֆինանսական վնաս, որպեսզի պատասխանողի վրա հայցի բավարարման արդյունքում դրվի իրավատիրոջը որպես փոխհատուցում որոշակի գումար վճարելու պարտականություն: Փոխարենը իրավատերը պետք է ապացուցի սուկ հեղինակային իրավունքի օբյեկտի ապօրինի օգտագործման փաստը:

Շրջանառության մեջ է դրվել նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» նոր օրենքի նախագիծը:

2024թ.-ի սեպտեմբերի 10-ին վավերացվել և սեպտեմբերի 26-ին ուժի մեջ է մտել «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի փոփոխության մասին» արձանագրությունը:

Արձանագրության նպատակն է զարգացող և քիչ զարգացած երկրների համար ապահովել թանկարժեք դեղորայքի հասանելիությունը՝ ստեղծված արտակարգ իրավիճակների վերացման նպատակով:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Համաձայնագրի հավելվածի դրույթների կիրառումը իրավունք է տալիս դեղամիջոցների ոչ բավարար արտադրական հզորություն ունեցող ԱՀԿ անդամ երկրներին արտակարգ իրավիճակների դեպքում դիմել ԱՀԿ այլ անդամի՝ իր երկրին անհրաժեշտ քանակությամբ դեղորայք ապահովելու համար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2024 թվականին հրապարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 77 գյուտի, 27 արդյունաբերական դիզայնի, 2501 ապրանքային նշանի մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2024 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների հայտեր» տեղեկագրի 24 համար: Իրականացվել է գյուտերի և կարճաժամկետ գյուտերի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական դիզայնների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին և գրադարաններին փոխանցելու, Գրասենյակի համակարգչային ցանցում ներքին օգտագործման, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2023 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Պատրաստվել և Գրասենյակի պաշտոնական կայքէջ են տեղադրվել տեղեկագրի էլեկտրոնային ձևերը:

2024 թվականին էլեկտրոնային եղանակով Գրասենյակ է ներկայացվել 1848 ապրանքային նշանի հայտ (2023 թվականին՝ 1580), 32 գյուտի (2023 թվականին՝ 36) և 16 արդյունաբերական դիզայնի հայտ (2023 թվականին՝ 18):

2024 թվականի ընթացքում Գրասենյակի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի և տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալության բարելավման նպատակով համագործակցել ենք Հայաստանի

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

տեղեկատվական համակարգերի գործակալության հետ: Քննարկել ենք առկա համակարգերի արդիականացման հնարավորությունները: Առաջարկվել է նախատեսել տվյալների քարտեզագրման և դասակարգման, տվյալների շտեմարանների ձևավորման գործընթացներ, որից հետո ձևավորել տեխնիկական առաջադրանք նոր համակարգ մշակելու համար:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված էկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը ինտեգրել ենք Գրասենյակի վեբ հավելվածի հետ, որը թույլ է տալիս ստորագրել համակարգի կողմից գեներացվող փաստաթղթերը համակարգի ներսում՝ ինքնաշխատ եղանակով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գրասենյակը շարունակել է ամրապնդել համագործակցությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2024 թվականին Գրասենյակի մասնագետների առկա և հեռավար մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներին:

2024թ. հունվարի 31-ից փետրվարի 2-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Իրավակիրարկման խորհրդատվական հանձնաժողովի 16-րդ նստաշրջանը: Հանդիպման նպատակն էր իրականացնել մտավոր սեփականության իրազեկման միջոցառումների և ռազմավարական արշավների վերաբերյալ ազգային փորձի փոխանակում, ինչպես նաև ներկայացնել մտավոր սեփականության նկատմամբ հարգանքի ձևավորման ուղղությամբ ՄՍՀԿ-ի ծավալած գործունեությունը և խորհրդատվական հանձնաժողովի կողմից անցկացվող աշխատանքները: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էր Մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցը:

2024 թվականի մայիսի 13-24-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում տեղի են ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության մտավոր սեփականության և գենետիկական ռեսուրսների, ավանդական գիտելիքների և ֆոլկլորի հարցերով միջկառավարական հանձնաժողովի նիստը և Դիվանագիտական համաժողովի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

նախապատրաստական կոմիտեի հանդիպումը, որին մասնակցել է Գրասենյակի ներկայացուցիչը: Քննարկվել է մտավոր սեփականության, գենետիկական ռեսուրսների և գենետիկական ռեսուրսների հետ կապված ավանդական գիտելիքների միջազգային իրավական փաստաթղթի վերջնական տեքստը և այն ներկայացվել է ստորագրման: Փաստաթուղթը բաց է լինելու ՄՍՀԿ բոլոր անդամ պետությունների համար՝ հետագայում ստորագրելու նպատակահարմարություն ունենալու դեպքում:



2024 թ. մայիսի 15-16-ը ք. Երևանում տեղի է ունեցել «Ընդհանուր փորձագիտական տարածք. Արտոնագրային փորձաքննության արդի խնդիրները» թեմայով տարածաշրջանային աշխատաժողով: Այն կազմակերպվել է Եվրասիական արտոնագրային

կազմակերպության (ԵԱԱԿ) և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի հետ համատեղ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) աջակցությամբ: Աշխատաժողովը համախմբել է տարբեր ոլորտների փորձագետների և շահագրգիռ կողմերի՝ քննարկելու արտոնագրերի փորձաքննության և մտավոր սեփականության իրավունքների հրատապ խնդիրները: Աշխատաժողովի օրակարգն ընդգրկում էր թեմաների լայն շրջանակ՝ սկսած համակարգչային գյուտերի և արհեստական ինտելեկտի տարրերով գյուտերի փորձաքննությունից մինչև դեղագործական գյուտերի արտոնագրման և գրաֆիկական ինտերֆեյսի պահպանության հետ կապված հարցեր, ինչպես նաև կլոր-սեղան քննարկում՝ նվիրված պահպանված ապրանքային նշանների և հեղինակային իրավունքի օբյեկտների տարրեր պարունակող դիզայնների փորձաքննությանը: Համագործակցությունն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ամրապնդելու և ավելի խորացնելու նպատակով աշխատաժողովի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի և Ռուսաստանի Դաշնության մտավոր սեփականության դաշնային ծառայության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր:

2024 թվականի հունիսի 10-11-ը Մոսկվայում տեղի է ունեցել Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) վարչական խորհրդի բյուջետային աշխատանքային խմբի 31-րդ հերթական նիստը, որին մասնակցել են ԵԱԱԿ անդամ երկրների լիազոր ներկայացուցիչները: Նիստի ընթացքում քննարկվել է Եվրասիական արտոնագրային կազմակերպության 2023 թվականի բյուջեի կատարողականը, ինչպես նաև ԵԱԱԿ անդամ երկրների մտավոր սեփականության արտոնագրային գերատեսչությունների աշխատակիցների համար ուսումնական ծրագրերի ընդլայնման հարցը:



2024թ. հունիսի 17-18-ը ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Առևտրային իրավունքի զարգացման ծրագիրը (CLDP), համագործակցելով Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի հետ,

ք. Երևանում կազմակերպել է պետական-մասնավոր կլոր սեղան-քննարկում՝ ուղղված մտավոր սեփականության իրավունքների (ՄՄԻ) պաշտպանության և կիրարկման բարելավմանը, որին մասնակցել են գրասենյակի ներկայացուցիչները:

2024թ. հուլիսի 1-5-ը ք. Սոչիում տեղի են ունեցել ամենամյա «Ամառային ՄՍ Ակադեմիայի» շրջանակներում անցկացվող մտավոր սեփականության ոլորտի մասնագետների որակավորման բարձրագույն դասընթացներ, որոնց մասնակցել են գրասենյակի երկու աշխատակից: Դասընթացները կազմակերպվել են

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական արտոնագրային կազմակերպության և Ռուսաստանի մտավոր սեփականության պետական սկադեմիայի համագործակցության արդյունքում: Դասընթացների թեմաները ներառում էին «Մտավոր սեփականության էկոնոմիկա. Մտավոր սեփականության (ՄՍ) արժևորությունը և մտավոր գործունեության արդյունքի արժեքը (գինը)» վերնագրով քննարկումների շարք, ինչպես նաև որակավորման բարձրացման դասընթացի դասախոսություններ:

2024 թվականի հուլիսի 9-ից 17-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայացել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) 65-րդ՝ Մադրիդի միության և Արտոնագրային համագործակցության պայմանագրի միության համաժողովները, որին մասնակցել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը



ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարի գլխավորությամբ: Համաժողովների շրջանակներում ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգր երկկողմ հանդիպում ունեցավ Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ: Հանդիպմանը ներկա էին նաև Տարածաշրջանային և ազգային զարգացման ոլորտի գծով գլխավոր տնօրենի տեղակալ Հասան Քլայբը, Անցումային և զարգացած երկրների բաժնի տնօրեն Հաբիբ Ասանը, ՀՀ դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը և Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՄՍ զարգացման ռազմավարության մշակման հարցերը, ինչպես նաև ՄՍ իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՍՀԿ 65-րդ համաժողովների շրջանակներում 2024 թվականի հուլիսի 11-ին տեղի ունեցավ Եվրասիական արտոնագրային կազմակերպության վարչական խորհրդի 44-րդ նիստը: Այն անցկացվեց ՄՍՀԿ-ի նստավայրում և նվիրված էր Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի 30-ամյակին: Նիստին մասնակցում էին Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչները՝ մտավոր սեփականության ոլորտը համակարգող



գերատեսչությունների

ղեկավարները: Վարչական խորհրդի նիստում ներկայացվեց Եվրասիական արտոնագրային կազմակերպության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը և

որոշում կայացվեց բարելավել Եվրասիական արտոնագրային կազմակերպության կրթաթոշակային ծրագրերի և վերապատրաստման ծրագրերի պայմանները, ինչպես նաև իրականացնել արտոնագրային փաստաթղթերի էլեկտրոնային հարթակի միջոցով փոխանակում:

ՄՍՀԿ 65-րդ համաժողովների շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ակադեմիայի գործադիր տնօրենի հետ: Հանդիպման ընթացքում Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարը տեղեկացրել է, որ ՄՍՀԿ ակադեմիայի հետ համատեղ ստեղծվող մտավոր սեփականության ուսումնական կենտրոնի բացման հետ կապված աշխատանքները մոտեցել են վերջնական փուլին: Նախատեսվում է ստորագրել փոխըմբռնման հուշագիր Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ՝ ուսումնական կենտրոնի հիմնադրման նպատակով:

2024 թվականի հուլիսի 16-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) 65-րդ համաժողովների շրջանակներում Մտավոր

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) նստավայրում Եվրասիական արտոնագրային գերատեսչության կողմից (ԵԱԱԳ) կազմակերպվել էր ցուցահանդես՝ նվիրված Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի (ԵԱԱԿ) 30-ամյակին: Ցուցահանդեսին մասնակցել և իրենց տաղավարներն են ներկայացրել ԵԱԱԿ անդամ երկրները: Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը հայկական տաղավարի ցուցադրությունը կազմակերպել էր Հովհաննես Շարամբեյանի անվան



Ժողովրդական արվեստի թանգարանի հետ համատեղ: Տաղավարում ներկայացված էին հայկական մետաքսե գորգ, ասեղնագործություններ և հայկական զարդանախշերով բացիկներ, որոնք հնարավորություն էին տալիս «Արլուպա» ծրագրի միջոցով դիտել հայկական գորգագործությունը և լավաշ թխելու գործընթացը: Ցուցահանդեսի բացմանը հնչեցին հայկական դուդուկը և շվին: Ներկայացվեցին Գրիգոր Նարեկացու, Կոմիտասի, Սայաթ-Նովայի և այլ հայկական ժողովրդական ստեղծագործություններ, ինչպես նաև մատուցվեցին հայկական ավանդական խոհանոցի ուտեստներ:

2024 թվականի հունիսի 10-11-ը և օգոստոսի 5-7-ը Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) վարչական խորհրդի բյուջետային աշխատանքային խմբի 32-րդ հերթական նիստին: Նիստին մասնակցել են Վարչական խորհրդում ԵԱԿ անդամ երկրների լիազոր ներկայացուցիչները: Նիստի ընթացքում քննարկվել են Եվրասիական

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) 2024 և 2025 թվականների բյուջեների նախահաշիվները համապատասխանաբար:

2024թ. սեպտեմբերի 9-10-ը Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) գլխամասում, Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում տեղի ունեցավ ԵԱԱԿ վարչական խորհրդի 45-րդ հերթական նիստը, որին մասնակցում էին Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի անդամ երկրների լիազոր ներկայացուցիչները: Վարչական խորհրդի շրջանակներում տեղի է ունեցել Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ստորագրման 30-ամյակի տոնակատարության արարողությունը, ինչպես նաև մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության հարցերով միջպետական խորհրդի 14-րդ նիստը: Նիստին տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել է ՀՀ Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանը:



2024թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի և «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի միջև կնքվեց համագործակցության հուշագիր

Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ուսումնական կենտրոն ստեղծելու նպատակով: Մտավոր սեփականության ուսումնական կենտրոնի ծրագիրը մեկնարկել է 2023թ.-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) և ՄՄ Գրասենյակի միջև կնքված ՀՀ-ում մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոն հիմնադրելու մասին համագործակցության համաձայնագրի շրջանակներում և գործելու է ՀԱՀ Շարունակական կրթության բաժնի շրջանակում: ՄՄ ուսումնական կենտրոնը

կլինի առաջինը Հայաստանում՝ որպես առանձին մտավոր սեփականության առարկա դասավանդող ուսումնական հաստատություն: Այն կնպաստի մտավոր սեփականության ոլորտի իրազեկման բարձրացմանը, կտրամադրի ոլորտի հիմնական և մասնագիտական գիտելիքներ, կիրականացնի ոլորտի մասնագետների վերապատրաստում և նոր կադրերի պատրաստում: Կենտրոնը կգործարկվի 2025 թվականի առաջին կիսամյակում:

2024թ. հոկտեմբերի 9-ին Գրասենյակի ներկայացուցիչը առցանց մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիային առընթեր մտավոր սեփականության հարցերով խորհրդատվական կոմիտեի 14-րդ նիստին:

2024թ. հոկտեմբերի 14-ից 18-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Արտոնագրային իրավունքի հարցերի մշտական հանձնաժողովի 36-րդ նիստը, որին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցը:

2024 թվականի հոկտեմբերի 16-17-ը Թուրքմենստանի Աշխաբադ քաղաքում տեղի է ունեցել «Դիզայնի իրավական պահպանություն: Արդյունաբերական նմուշների իրավական պահպանության համակարգերի մշակում եվրասիական տարածաշրջանում» խորագրով տարածաշրջանային սեմինարը, որին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցը՝ հանդես գալով «Ապրանքային նշանների առկայությամբ արդյունաբերական դիզայներ. դիզայնի իրավական պահպանություն. արդյունաբերական նմուշների իրավական պահպանության համակարգերի զարգացումը եվրասիական տարածաշրջանում» թեմայով ելույթով:

2024թ. հոկտեմբերի 21-23-ը Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են «Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման Հաագայի համակարգի իրավական զարգացման աշխատանքային խմբի» առցանց հանդիպմանը:

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2024թ. նոյեմբերի 6-ին Գրասենյակի ներկայացուցիչը տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել է Եվրասիական արտոնագրային կազմակերպության և Ռուսաստանի Մտավոր սեփականության պետական ակադեմիայի կողմից համատեղ կազմակերպված՝ «Տարածաշրջանային և ազգային արտոնագրային իրավունքը: զարգացման միտումները երեսուն տարի անց» խորագրով կլոր սեղանին, որի ընթացքում հանդես է եկել «Հայաստանի Հանրապետության արտոնագրային իրավունքը: արդյունքներն ու հեռանկարները» թեմայով զեկույցով:

2024թ. նոյեմբերի 7-ին նախարարության մտավոր սեփականության գրասենյակը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) հետ համատեղ և «Հայաստանի խաղողագործության և



գինեգործության հիմնադրամի» աջակցությամբ կազմակերպել է «Մտավոր սեփականությունը՝ որպես հայկական գինեգործության կայուն զարգացման շարժիչ ուժ» ծրագրի մեկնարկին նվիրված աշխատաժողովը: Աշխատաժողովի շրջանակներում նոյեմբերի 5-9-ին պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն է այցելել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Հասան Քլայբի գլխավորած պատվիրակությունը:

2024թ. նոյեմբերի 12-15-ը Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրների (CEEAC) և դիտորդների համար Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին «ԹԴԻՓՍ»

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

համաձայնագրի վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողովին», որը կազմակերպվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից (ԱՀԿ) Վիեննա քաղաքում (Ավստրիա):



2024 թվականի դեկտեմբերի 3-ից 4-ը Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում կայացած «Տվյալների փոխանակման անցումը ընդարձակվող նշագրման լեզվին (XML) և կիրառական ծրագրավորման ինտերֆեյսի (API) ներդրումը Արևելյան Եվրոպայից և շրջակա տարածաշրջաններից Մադրիդյան միության անդամ ընտրված գրասենյակների համար» տարածաշրջանային աշխատաժողովին:

2024 թվականի դեկտեմբերի 23-27-ը Գրասենյակի ներկայացուցիչը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում մասնակցել է «Կառավարում «Կիբեր կրկնօրինակում» տարբերակ 16» թեմայով վերապատրաստման դասընթացին: Դասընթացը հնարավորություն է ընձեռեց մասնակցին ձեռք բերել նոր գիտելիքներ՝ ցանկացած ծրագրային լուծումների վրա կառուցված կազմակերպության տեղեկատվական համակարգերի կրկնօրինակման և վերականգնման նպատակով ունիվերսալ համակարգ ստեղծելու համար:

Դեկտեմբերի 5-6-ը Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում կայացավ «Անտիկոնտրաֆակտ-2024» միջազգային համաժողովը, որը նվիրված էր արդյունաբերական արտադրանքի ապօրինի շրջանառության հակազդման, ինչպես նաև մտավոր սեփականության ոլորտում իրավունքների պաշտպանության հարցերին: Համաժողովին առցանց ձևաչափով մասնակցել են գրասենյակի ներկայացուցիչները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացքում տեղի են ունեցել «ԵԱՏՄ-ում մինչև 2030 թվականը տնտեսական գործընթացների հետագա զարգացման մասին Հոչակագրի իրականացման և մինչև 2045 թվականը «Եվրասիական տնտեսական ուղի» մտավոր սեփականության ոլորտում գործողության ծրագրի նախագիծ»-ը մշակելու համար կազմակերպված առցանց կանոնավոր խորհրդակցություններ՝ կազմակերպված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից: Հանդիպումներին մասնակցել են Գրասենյակի ներկայացուցիչները:

2024 թվականի ընթացքում Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են Եվրասիական արտոնագրային գրասենյակի և Ռուսաստանի Մտավոր սեփականության պետական ակադեմիայի կողմից համատեղ կազմակերպված ամենամյա վերապատրաստման դասընթացներին՝ «Մտավոր սեփականություն, Արտոնագրային գիտություն» թեմայով: